ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-1356-14.05.2026-ՏՏԳՇ-011/0), ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-1356[1]-14.05.2026-ՏՏԳՇ-011/0), ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-1356[2]-14.05.2026-ՏՏԳՇ-011/0), «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-13563-14.05.2026-ՏՏԳՇ-011/0) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	Պատգամավոր Զարուհի Բաթոյան	«ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-1356-14.05.2026-ՏՏԳՇ-011/0) օրենքի նախագծի 1-ին հոդված:	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «2) 1-ին մասը լրացնել նոր կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «7) հաստատում է Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորմանն ուղղված, կենդանիների որդեգրման խրախուսման, թափառող կենդանիների խնամքի ժամանակակից և մարդասիրական մեթոդների ներդրման, ինչպես նաև մարդկանց և կենդանիների համակեցության, սանիտարահիգիենիկ անվտանգության և հանրային բարեկեցության վերաբերյալ հանրային կրթության ծրագիրը:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2	Պատգամավոր Զարուհի Բաթոյան	Օրենքի նախագծի **2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին	Ընդունվել է:	Ընդունվել է:

			մասը լրացնել 12-15-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ. «12) կացարանների կողմից հրապարակային հաշվետվություն ներկայացնելու կարգի սահմանումը. 13) տնային և թափառող կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորմանը, կենդանիների խնամքի ժամանակակից և մարդասիրական մեթոդների, ինչպես նաև մարդկանց և կենդանիների համակեցության, սանիտարահիգիենիկ անվտանգության և հանրային բարեկեցության վերաբերյալ պետական կրթական ծրագրերի մշակումը և իրականացումը. 14) տնային և թափառող կենդանիների հետ աշխատող համապատասխան մասնագետների ուսուցման, վերապատրաստման և վերաորակավորման գործընթացի կազմակերպը. 15) Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորմանն ուղղված, կենդանիների որդեգրման խրախուսման, թափառող կենդանիների խնամքի ժամանակակից		

			և մարդասիրական մեթոդների ներդրման, ինչպես նաև մարդկանց և կենդանիների համակեցության, սանիտարահիգիենիկ անվտանգության և հանրային բարեկեցության վերաբերյալ հանրային կրթության ծրագիրը մշակելը և իրականացնելը:»»		
3	Պատգամավոր Զարուհի Բաթոյան	Օրենքի նախագծի 3-րդ հոդված	Օրենքի նախագծի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ հանրային վերահսկողությունը կարող է իրականացվել հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաեւ քաղաքացիների կողմից կամավոր սկզբունքով: 2. Կենդանիների պաշտպանությունը կամ հանրային առողջապահությունը որպես կանոնադրական նպատակ սահմանած հասարակական կազմակերպությունները, որոնք վերը նշված ոլորտներում ունեն առնվազն երկու տարվա գործունեության փորձ, կարող են իրականացնել հասարակական մշտադիտարկում կացարանների գործունեության նկատմամբ՝ անկախ կազմակերպաիրավական տեսակից, սեփականության ձևից և	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ֆինանսավորման աղբյուրից՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով(ռոտացիոն սկզբունքով): Սույն հոդվածի իմաստով՝ հասարակական մշտադիտարկումը ներառում է կացարանների կողմից խնամքի տրամադրման օրենսդրությամբ սահմանված նվազագույն չափորոշիչների, կարգի, պայմանների պահպանման, ինչպես նաև սույն օրենքով սահմանված պահանջների ապահովման նկատմամբ մշտադիտարկման գործառույթները»:		
4	Պատգամավոր Զարուհի Բաթոյան	Օրենքի նախագծի 4-րդ հոդված	Օրենքի նախագծի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «Հոդված 9. Կենդանիների նկատմամբ արգելված գործողությունները 1. Արգելվում է կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը, այն է՝ 1) ցանկացած գործողություն, որը հանգեցնում է կենդանու մահվան. 2) կենդանուն խեղդելը, կախելը, մասնատելը, ուժեղ հարվածելը, մտրակելը, կենդանու նկատմամբ զենք կիրառելը, դիտավորությամբ վրաերթի ենթարկելը, եթե նույնիսկ այդ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			գործողությունները չեն հանգեցրել կենդանու կյանքի ընդհատման: 3) կենդանու կյանքի ընդհատումը թունավորման կամ այնպիսի նյութի ներարկման միջոցով, որը հանգեցնում է դաժան եւ ցավոտ մահվան. 4) կենդանի վիճակում կենդանու մաշկահանումը, մորթազերծումը, հերձումը կամ անդամահատումը. 5) կենդանի վիճակում կենդանուն կրակի վրա նետելը, բարձրությունից կամ ընթացքի մեջ գտնվող փոխադրամիջոցներից նետելը. 6) բոլոր տեսակի կենդանիների մարտերի կազմակերպումը, իրականացումը եւ մասնակցությունը 7) թափառող կենդանիների այնպիսի հավաքը կամ բռնումը, որը հանգեցնում է կենդանու խեղմանը կամ կենդանու կյանքի ընդհատմանը. 8) տիրոջ կողմից կենդանուն կանխամտածված կամ անփութորեն հյուծելը՝ քաղցի մատնելու միջոցով. 9) իրականացնել կենդանիների քնեցում կամ սպանդ, գլխաքանակի կարգավորման կամ վերարտադրության սահմանափակման նպատակով.		

			10) վիրաբուժական միջամտության իրականացումն առանց անզգայացման կամ ոչ համապատասխան դեղաչափով անզգայացմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ կենդանու տարիքից, ֆիզիկական և առողջական վիճակից ելնելով կան անզգայացման հակացուցումներ կամ վիրահատական միջամտությունը հրատապ է իսկ անզգայացումը կյանքի համար ռիսկեր է պարունակում. 11) առանց «Անասնաբուժության մասին» օրենքով սահմանված հիմքերի կենդանու քնեցումը. 12) առանց անզգայացման կամ ոչ համապատասխան չափաբաժնով անզգայացմամբ կենդանու քնեցումը. 13) կենդանուն թողնելը իր կենսագործունեության հետ անհամատեղելի միջավայրում: 2. Պատասխանատվություն չեն առաջացնում կենդանուն մտրակելը, քարով, ոտքով հարվածելը, կենդանու նկատմամբ էլեկտրաշոկ, գազային բալոն կիրառելը, եթե այդ արարքները կենդանու կողմից մարդու կյանքին եւ առողջությանը սպառնացող վտանգի պարագայում ինքնապաշտպանության		

			կամ այլ անձանց պաշտպանության նպատակով են կատարվել. 3. Արգելվում է նաեւ՝ 1) կենդանու նկատմամբ սեփականության իրավունքից կամ պահելուց հրաժարվելը մինչ կենդանուն նոր պահողի կամ համապատասխան կացարան հանձնելը. 2) կենդանուն կանխամտածված կամ անփութորեն լքելը. 3) կենդանիների բուծումը կացարաններում. 4) կենդանիներին միմյանց նկատմամբ սադրելը. 5) կենդանիների այնպիսի վարժեցումը, որը կարող է տանջանք կամ ցավ պատճառել կամ ուժասպառ անել կենդանուն, ինչպես նաեւ այնպիսի հարմարանքների կիրառումը, որոնք ինքնին, անգամ առանց մարդու միջամտության կարող են տանջանք կամ ցավ պատճառել կամ ուժասպառ անել կենդանուն կամ վնասակար ազդեցություն ունենալ կենդանու անատոմիական եւ ֆիզիոլոգիական կարողությունների վրա.		

			6) առանց կենդանիների անատոմիական եւ ֆիզիոլոգիական կարողությունները հաշվի առնելու՝ դրանց ենթարկել ֆիզիկական ճնշումների. 7) անհրաժեշտ որակավորում եւ մասնագիտական կրթություն չունեցող անձանց կողմից կենդանիների բուժման և վիրահատական միջամտությունների իրականացումը, բացառությամբ կենդանուն առաջին բուժօգնություն ցուցաբերելու, ինչպես նաեւ անասնաբույժի կողմից նշանակված բուժումը ամբուլատոր պայմաններում եւ ոչ հանրային տարածքներում իրականացնելու դեպքերի. 8) ցավազրկող նյութերի կամ այնպիսի նյութերի կիրառումը, որոնք կարող են կենդանիների առողջությանը վնասել, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք բժշկական կամ անասնաբուժական հիմնավորում ունեն կամ թույլատրված փորձարկման շրջանակում կատարվելիք բուժում են հանդիսանում. 9) սպորտային առավել արդյունքների ստացման նպատակով կենդանիների նկատմամբ խթանիչ նյութերի կիրառումը.		

			10) բնական կամ արհեստական սերմնավորումը, որը կենդանիների առողջության համար վտանգավոր է. 11) կենդանիներին կերակրումն այնպիսի կերատեսակներով, որոնք պարունակում են վնասակար նյութեր, կամ չեն օգտագործվում տվյալ կենդանու կերակրման համար. 12) տարբեր տեսակների միեւնույն տարածքում կամ միեւնույն տարածքում միեւնույն տեսակների բնակեցումը, որոնց միջեւ առաջանում է ագրեսիվություն, հարձակում կամ պայքար. 13) տնային կենդանիների բուծումը կամ պահումը մսի կամ մորթու արտադրության նպատակով.»:		
5	Պատգամավոր Զարուհի Բաթոյան	Օրենքի նախագծի 6-րդ հոդված	Օրենքի նախագծի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1)Օրենքի 11-րդ հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 11. Թափառող կենդանիների բռելու, ստերջացման, պատվաստման և նույն տարածք վերադարձի գործընթացում պատասխանատու վերաբերմունքի պահանջները», 2)3-րդ մասի «կենդանին բաց է թողնվում» բառերից հետո լրացնել	Ընդունվել է:	Ընդունվել է:

			«նույն տարածք, որտեղից բռնվել է» բառերը,»:		
6	Պատգամավոր Զարուհի Բաթոյան	Օրենքի նախագծի 8-րդ հոդված	Օրենքի նախագծի 8-րդ հոդվածում նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 16-րդ հոդվածի 10-րդ մասում «Կառավարության» բառը փոխարինել «Լիազոր մարմնի» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7	Պատգամավոր Զարուհի Բաթոյան	ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-13561-14.05.2026-ՏՏԳՇ-011/0) օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող նոր խմբագրությամբ շարադրվող 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 113-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Առանց ցավազրկման, կամ ոչ համապատասխան չափաբաժնով ցավազրկմամբ վիրաբուժական միջամտություն իրականացնելը, բացառությամբ այն դեպքերի, երբ կենդանու տարիքից, ֆիզիկական և առողջական վիճակից ելնելով կան անզգայացման հակացուցումներ կամ վիրահատական միջամտությունը հրատապ է, իսկ անզգայացումը կյանքի համար ռիսկեր է պարունակում՝	Ընդունվել է:	Ընդունվել է:

			առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:»:		
8	Պատգամավոր Զարուհի Բաթոյան	ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-13561-14.05.2026-ՏՏԳՇ-011/0) օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 113-րդ հոդվածի 9-րդ մասում «կենդանիների բուժման» բառերից հետո լրացնել «և վիրահատական միջամտությունների» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
9	Պատգամավոր Զարուհի Բաթոյան	ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 113-րդ հոդվածի 14-րդ մասում «Առանց» բառից հետո	Ընդունվել է:	Ընդունվել է:

		ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-13561-14.05.2026-ՏՏԳՇ-011/0) օրենքի նախագծի 1-ին հոդված	լրացնել «հաշվառման կամ երեքից ավելի կենդանու դեպքում առանց» բառերը:		
10	Պատգամավոր Զարուհի Բաթոյան	ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-13561-14.05.2026-ՏՏԳՇ-011/0) օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 113-րդ հոդվածը լրացնել նոր՝ 18-րդ մասով հետևյալ խմբագրությամբ. «18. Պոտենցիալ վտանգավոր շների զբոսանքը ցանկացած հանրային վայրում դնչկալով և առնվազն մեկ մետր կարճեցված կապով չկազմակերպելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված	Ընդունվել է:	Ընդունվել է:

			նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:»:		
11	Պատգամավոր Զարուհի Բաթոյան	ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-13561-14.05.2026-ՏՏԳԾ-011/0) օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 113-րդ հոդվածը լրացնել նոր՝ 19-րդ մասով հետևյալ խմբագրությամբ. «19. պոտենցիալ վտանգավոր շների գտնվելը մարզադաշտերում, մանկապարտեզներում, մանկական խաղահրապարակներում, առողջապահական հիմնարկների, ուսումնական հաստատությունների, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների, ծերերի, հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի կենտրոնների/կազմակերպությունների տարածքներում, հասարակական տրանսպորտում չբացառելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

12	Պատգամավոր Զարուհի Բաթոյան	ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-13561-14.05.2026-ՏՏԳՇ-011/0) օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 113-րդ հոդվածը լրացնել նոր՝ 20-րդ մասով հետևյալ խմբագրությամբ. . «20. Ոչ իրենց սեփականության, տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող հատուկ առանձնացված տարածքներում կամ մեկուսացված շինություններում, շների համար նախատեսված համայնքային կամ մասնավոր զբոսայգիներում շներ պահողների կողմից դրանց ազատ արձակելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
13	Պատգամավոր Զարուհի Բաթոյան	ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 113-րդ հոդվածը լրացնել նոր՝ 28-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ. «28. Առանց ցավազրկման, կամ ոչ համապատասխան չափաբաժնով ցավազրկմամբ կենդանու քնեցումը ՝	Ընդունվել է:	Ընդունվել է:

		ՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-13561-14.05.2026-ՏՏԳՇ-011/0) օրենքի նախագծի 1-ին հոդված	առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:»:		
14	Պատգամավոր Զարուհի Բաթոյան	ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-13561-14.05.2026-ՏՏԳՇ-011/0) օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 113-րդ հոդվածը լրացնել նոր՝ 29-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ . «29. Առանց «Անասնաբուժության մասին» օրենքով սահմանված հիմքերի կենդանու քնեցումը՝ առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
15	Պատգամավոր Զարուհի Բաթոյան	ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 113-րդ հոդվածը լրացնել նոր՝ 30-րդ մասով, հետևյալ	Ընդունվել է:	Ընդունվել է:

		ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-13561-14.05.2026-ՏՏԳՇ-011/0) օրենքի նախագծի 1-ին հոդված	բովանդակությամբ . «30. Թափառող կենդանիների բռնելու, ստերջացման, պատվաստման և նույն տարածք վերադարձի, գործընթացում պատասխանատու վերաբերմունքի պահանջները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինսապատիկից հարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարիուրապատիկի չափով:»:		
16	Պատգամավոր Զարուհի Բաթոյան	ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-13561-14.05.2026-ՏՏԳՇ-011/0) օրենքի	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 113-րդ հոդվածի 32-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «32. Կենդանու նկատմամբ այնպիսի դիտավորյալ գործողություն իրականացնելը, որը հանգեցրել է կենդանու խեղման կամ մահվան՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհինսապատիկից մինչեւ հինգհարյուրապատիկի չափով:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

		նախագծի 1-ին հոդված			
17	Պատգամավոր Զարուհի Բաթոյան	ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-13561-14.05.2026-ՏՏԳՇ-011/0) օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 113-րդ հոդվածի 33-րդ մասում «22» թիվը փոխարինել «32»-ով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
18	ՀՀ Կառավարություն	«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (Պ-1356-	Նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերով՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Չի ընդունվել, քանի որ նախագծով նախատեսվում է երկու լրացում իրականացնել:	

		14.05.2026-ՏՏԳԾ-011/0) նախագծի վերնագիր			
19	ՀՀ Կառավարություն	«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում՝ 1) հաշվի առնել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի» 17-րդ հոդվածի 8-րդ և 18-րդ հոդվածի 3-րդ մասերի համաձայն՝ Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
20	ՀՀ Կառավարություն	«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագծի 1-ին հոդված	Նոր խմբագրությամբ շարադրվող 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «2) հաստատում է Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող կենդանիների առողջության պաշտպանության ծրագիրը. 2.1) թափառող կենդանիների վերարտադրության սահմանափակման՝ բռնելու, ստերջացման, պատվաստման և նույն տարածք վերադարձի ծրագիրը.»: Առաջարկությունն ընդունելու պարագայում անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել նաև նախագծի 2-րդ հոդվածում:	Ընդունվել է:	Ընդունվել է:

21	ՀՀ Կառավարություն	«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «կենդանիների» բառից հետո լրացնել «բացառությամբ վայրի կենդանիների» բառերը:	Առաջարկը չի ընդունվել, քանի որ, ինչպես օրենքի նախաբանում է նշվում, սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում տնային և թափառող, ծառայողական, ցուցադրման, սպորտային կամ ժամանցային միջոցառումների համար օգտագործվող կենդանիների հետ կապված հարաբերությունները:	
22	ՀՀ Կառավարություն	«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին	1) Նպատակահարմար է օրենքով սահմանել առնվազն հասարակական մշտադիտարկման հիմնական սկզբունքները, հասարակական կազմակերպությունների նկատմամբ ներկայացվող նվազագույն պահանջները և դիտորդական գործունեության	Ընդունվել է:	Ընդունվել է:

		Նախագծի 2-3-րդ հոդվածներ	հիմնական երաշխիքները՝ պետական լիազոր մարմնին թողնելով միայն դրանց կիրառման ընթացակարգային կարգավորումը: 2) Միաժամանակ առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող գործող օրենքի 5-րդ հոդվածի 10-րդ կետը համապատասխանեցնել 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին՝ հաշվի առնելով, որ բաց է մնում հասարակական կազմակերպություններին ներկայացվող պահանջները, լիազորությունների ժամկետը, խմբի անդամների թիվը, ինչպես նաև հասարակական դիտորդների խմբի կազմը և իրավասությունների շրջանակը սահմանող դրույթը:		
23	ՀՀ Կառավարություն	«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին	Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 17-րդ կետով նշվում է, որ արգելվում է նաև կենդանուն օրվա ընթացքում 12 ժամից ավելի կապի վրա պահելը, իսկ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված 3.1-ին մասով սահմանվում է, որ կենդանուն օրվա ընթացքում 12	Ընդունվել է:	Ընդունվել է:

		նախագծի 4-րդ հոդված	ժամից ավելի կապի վրա պահելը առաջացնում է տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից-հարյուրապատիկի չափով: Կարծում ենք կարգավորումը խնդրահարույց է, մասնավորապես՝ գյուղական բնակավայրերում, իրենց բակում կենդանի պահողների համար, ինչպես նաև այն մասով, որ կենդանին կարող է ագրեսիվ վարք ունենալ և արձակ վիճակում գտնվելու պարագայում կարող է վնաս հասցնել շրջապատին, ինչը ևս տուգանքի նշանակման առիթ կարող է հանդիսանալ:		
24	ՀՀ Կառավարություն	«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր 18-րդ (14-րդ) և 19-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ «14) կենդանիների օգտագործումը զվարճանքի նպատակով այնպիսի ձևերով, որոնք առաջացնում են սթրես կամ բնական վարքի խաթարում. 19) կենդանիների նկատմամբ բռնության տեսանյութերի նկարահանումը կամ տարածումը:»:	Ընդունվել է մասնակի: Օրենքի տվյալ հոդվածն անդրադառնում է կենդանիների հանդեպ վերաբերմունքի, և նշված՝ 19-րդ կետը չի բխում դրա տրամաբանությունից ու սկզբունքներից:	Ընդունվել է:
	ՀՀ Կառավարություն	«Կենդանիների նկատմամբ պատասխանատու	Նախագծի 5-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 10-րդ հոդվածի՝	Ընդունվել է:	Ընդունվել է:

25		վերաբերմունքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագծի 5-րդ հոդված	1) 4-րդ մասի համաձայն՝ շներ պահողները իրավունք ունեն դրանց ազատ արձակել միայն իրենց սեփականության, տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող հատուկ առանձնացված տարածքներում կամ մեկուսացված շինություններում: Առաջարկում ենք սույն կարգավորման մեջ կատարել լրացում՝ նախատեսելով, որ շներ պահողները իրավունք ունեն շներին ազատ արձակել նաև համայնքային կամ շների մասնավոր զբոսայգիներում:		
26	ՀՀ Կառավարություն	«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագծի 5-րդ հոդված	2) Նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ երեքից ավելի շուն պահելու համար կենդանի պահողը պարտավոր է թույլտվություն ստանալ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից: Այդ կապակցությամբ տեղեկացնում ենք, որ «Տեղական ինքնակառավարման մասին օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 2026 թվականի մարտի 25-ի ՀՕ-127-Ն օրենքի 50.1 հոդվածի, իսկ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2026 թվականի մարտի 25-ի ՀՕ-128-Ն օրենքի 58.1 հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարը (քաղաքապետը) սահմանված կանոններին	Ընդունվել է:	Ընդունվել է:

			(համաքաղաքային կանոններին) համապատասխան՝ տալիս է համայնքի (քաղաքի) տարածքում տնային կենդանիներ պահելու թույլտվություն և կատարում է դրանց հաշվառումը: Այսինքը թույլտվություն ստանալու համար սահմանաքանակ չի դիտարկվել: Հարկ է նկատել նաև, որ ՀՀ կառավարության 18.04.2026թ-ի N 513-Ա որոշմամբ հավանության արժանացած «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 40-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով սահմանվել է, որ քաղաքապետը ավագանու սահմանած կարգով տալիս է Երևանի վարչական տարածքում կենդանիներ պահելու թույլտվություն: Մինչդեռ, «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ «Երեքից ավելի շուն պահելու համար կենդանի պահողը պետք է համաձայնություն ստանա տեղական ինքնակառավարման մարմնից»: Այսինքն՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով թույլտվություն ստանալու համար չի դիտարկվել		

			սահմանաքանակ, իսկ «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքով ամրագրված է երեքից ավել շուն պահելու համար համաձայնություն ստանալու պահանջ: Հետևաբար, առաջարկում ենք վերոնշյալ օրենքների կարգավորումները համապատասխանեցնել «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի կարգավորումներին, իսկ Նախագծում «թույլտվություն» բառը փոխարինել «համաձայնություն» բառով, հաշվի առնելով, որ ընդունված օրենքում օգտագործվում է համաձայնություն բառը,		
27	ՀՀ Կառավարություն	«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագծի 5-րդ հոդված	3) Նախագծի 5-րդ հոդվածի 6-րդ կետը հանել, հաշվի առնելով նույն հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով սահմանված կարգավորումը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
	ՀՀ Կառավարություն	«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի	Նախագծի 6-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասում «արգելվում է» բառերից հետո լրացնել «,	Չի ընդունվել, քանի որ սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին	

28		մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագծի 6-րդ հոդված	բացառությամբ «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի» բառերով:	մասը հղում է տալիս «Անասնաբուժության մասին» օրենքի 33-րդ հոդվածով սահմանված կարգին: Կարգը գործնականում հնարավոր է կիրառել կենդանուն բռնելուց, զննելուց և եզրակացություն ունենալուց հետո:	
29	ՀՀ Կառավարություն	«Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածով նախատեսվում է գործող օրենքի 16-րդ հոդվածը լրացնել 10-րդ մասով, համաձայն որի սահմանվում է, որ «Կացարանները պարտավոր են ներկայացնել հրապարակային հաշվետվություն կառավարության սահմանված կարգով (...)»: Սակայն, նախագծից բացակայում է անցումային դրույթները և սահմանված չէ համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունման ժամկետները:	Ընդունվել է:	Ընդունվել է:
30	ՀՀ Կառավարություն	Վարչական իրավախախտումնե	Նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ	Ընդունվել է:	Ընդունվել է:

		րի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերնագիր և 1-ին հոդված	ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառով: Միաժամանակ, նախագծի 1-ին հոդվածում «օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)» բառերը անհրաժեշտ է փոխարինել «Հայաստանի Հանրապետության օրենսգրքի» բառերով:		
31	ՀՀ Կառավարություն	Վարչական իրավախախտումնե րի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 113-րդ հոդվածի 16-րդ և 16.1-րդ մասերի միջև առկա են բովանդակային համընկնումներ, ինչը կարող է հանգեցնել կարգավորման կրկնության, ինչպես նաև խաթարել մտքի սահուն ընթացքը և առաջացնել իրավական անորոշություն: Առկա է նշված մասերի կիրառության սահմանազատման խնդիրներ: Մասնավորապես, նախատեսված իրավախախտումների օբյեկտիվ հատկանիշները բավարար չափով հստակեցված չեն, ինչի հետևանքով իրավակիրառ պրակտիկայում կարող են առաջանալ դրանց իրավական որակման և կիրառման ենթակա նորմի ընտրության հետ կապված դժվարություններ: Օրինակ՝ գործնականում հնարավոր է իրավիճակ, երբ կենդանին	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հարձակվում է այլ անձի կողմից տեղափոխվող սննդամթերքի կամ կենդանիների համար նախատեսված կերի վրա, սակայն այդ ընթացքում վնաս է պատճառվում նաև տվյալ անձի կենդանուն: Նման դեպքում հստակ չէ, թե արարքը ենթակա է որակման որպես գույքին վնաս պատճառելը կանխելու համար միջոցներ չձեռնարկելու, թե որպես կենդանուն կամ առողջությանը վնաս պատճառելը կանխելու համար միջոցներ չձեռնարկելու դեպք, քանի որ վնասի ուղղվածությունը և փաստացի առաջացած հետևանքը կարող են չհամընկնել: Արդյունքում, պահպանվում է կարգավորման բովանդակային համընկնումը, ինչը կարող է հանգեցնել իրավական անորոշության և իրավակիրառ պրակտիկայում տարբեր մոտեցումների ձևավորման: Այդ կապակցությամբ առաջարկվում է վերանայել 113-րդ հոդվածի 16-րդ և 16.1-ին մասերի բովանդակությունը՝ բացառելով այդ նորմերի մրցակցությունը և ապահովելով դրանց հստակ տարանջատումը:		
33	ՀՀ Կառավարություն	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» (Պ-13562-14.05.2026-ՏՏԳԾ-	Ընդունվել է:	Ընդունվել է:

		ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-13562-14.05.2026-ՏՏԳՇ-011/0) օրենքի նախագիծ	011/0) օրենքի նախագիծը հանել շրջանառությունից:		
34	ՀՀ Կառավարություն	«Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (Պ-13563-14.05.2026-ՏՏԳՇ-011/0) օրենքի նախագիծ	«Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (Պ-13563-14.05.2026-ՏՏԳՇ-011/0) օրենքի նախագիծը հանել շրջանառությունից:	Ընդունվել է:	Ընդունվել է: